600.0310.12.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2017 թվականի №310Ա

քաղ. Երևան

«ԱՐՓԻՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՈՉ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈԴԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» և 2-րդ կետի «ժդ» ենթակետերը, 42-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի №235Ն որոշումը և հաշվի առնելով «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 29-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Թույլատրել «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մինչև 2022 թվականի փետրվարի 8-ը Հայաստանի Հանրապետության տարածքում զբաղեցնելու հանրային ամրակցված հեռախոսային ցանցի «6086», «6087», «6088», «6089» և «6090» ոչ աշխարհագրական կոդերը և նրանց «xxxx» համարային շարքերը:
2. Հաստատել «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հուլիսի 2017թ.
ժամը 16[00]